

7103

Դրամատիկ Լ. ՎՈՍԿԵՆՈՐՆ

1931 ԹՎԻ ԳԵՐՆԱՆՑԱՆԻ
ԿԱՄՊՈՆԵՆՏԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

631.52

Ո-23

1931

Ձեռագիր փոխաձևանությունների նյութ
կոֆկապ յերկրային հրաբարակչություն

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ս. Անդրեյեվ.—Սոցիալիստական շինարարության նոր եռագլը	64
2. Կուլբեյկո.—Կուլակը կոլխոզի թշնամի	5
3. Դյուդառնտեսական կոմունայի կանոնադրություն	2
4. Սալիկ.—Պատասխան ընկեր կոլխոզնիկներին	5
5. Մ. Գիգոյան.—Կոլխոզների մասին	6
6. Վ. Իվանով.—Նոր եռագլում	5
7. Դյուդառնտեսական արտելի կանոնադրություն	2
8. Կնոջ աշխատանքը կոլխոզում	3
9. Ս. Անդրեյեվ.—Հյուս. Կովկ. գյուղատնտեսության օրգանիզացիան խնդիրները	2
10. Կուլիկ.—Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը կոլխոզներում	8
11. Ս. Անդր.—Սոցիալիստական շինարարության գոտում	8
12. Հյուս. Կովկ. Յերկր. ծխախոտագործական միության դիմումը	2
13. ՀԿ(Ը)Կ Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի գեկուցումը)	15
14. Ս. Հովհաննիսյան. յերգ մարտական փորձի (բանաստեղծություններ)	20
15. Հյուս. Կովկ. յերկրային 6 կուսկոնֆերենցիայի բանաձևերը	8
16. Ջարգացրեք կենդանաբուծությունը կոլխոզներում	15
17. Յեզիպտացորենի կուլտուրան Հ. Կ.	6
18. Միկուլա.—Դեպի նոր կենցաղը կոլխոզներում	5
19. Սկոմորոխով.—Պաշտպանեցեք անասուններին վարակումից	5
20. Դուրգովսկի.—Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին	6
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնորհ	18
22. Դյուդառնտեսական միասնական հարկը և գ. տ. սոց. վերակառուցումը	10
23. Յա. Տելկով.—Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսությունը և նրա վարչությունը 1-ին պրակ	8
24. Նույնը, 2-րդ պրակ	4
25. Ս. Գ. Բասալեջյան.—Անասնաբուծական կոլխոզի և նրա մասնաճյուղերի կառավարումը	20
26. Ս. Մեհաբեյ.—Խորհրդները վերընտրություններին հիմնական խնդիրները	7
27. Խորհրդները վերընտրություններին գործնական խնդիրները	8
28. Ամրապնդիր խորհրդները (պլյեսոս)	10
29. Ուստինով.—Կուլակության վերացումը և խորհրդների խնդիրները	7
30. Բասալեջյան.—Համատարած կոլեկտիվացման ավարտումը և 1931 թ. գար- նանացանի կամպանիայի խնդիրները	10

Պրոխորենի բոլոր յերկրների, միացե՛ք

631.52
Ո-23

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍ Լ. ՎՈՍԿԱՆՅԱՆ

1931 ԹՎԻ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ
ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

1773

2002



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ

16899

Агроном Л. ВОСКАНЯН

Практические задачи весеннего сева 1931 г.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ

Առաջիկա գործնականության կամպանիան, բոլորիսյան յերկրորդ գործունը, առաջ պետք է տարվի հարվածային տեսակով, վորպես համատարած կոլխոզային ցանք Հյուսիսային Կովկասում: Գործնականության կամպանիայի հետ կապված խնդիրները լրիվ է կանոնավորապես պետք է իրագործվեն՝ գյուղական աղագրականության կարողության և նրա ունեցած արտադրական միջոցների համաձայն: Այդ կարողությունն և արտադրական միջոցները դեռ շատ քիչ չափով են ոգտագործված:

Վերջին տարիներում կատարված կենդանի և անշունչ ինվենտարի հաշվառումը ցույց է տալիս, վոր ներկայումս գյուղացիական տնտեսությունը 1 հեկտարի համար ունի 30—34 ուրբուռ արժողութամբ գյուղատնտեսական մեքենաներ, գործիքներ, լծկան ուժեր և այլն: Լավ հիմքերի վրա դրված կոլխոզային կամ սովխոզային տնտեսությունների կազմակերպելու համար 1 հեկտարին անհրաժեշտ է 32 ուրբուռ ինվենտար: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր անհատական գյուղացիական տնտեսություններն ունեն զգալի քանակությամբ արտադրական միջոցներ: Մեկ հեկտարի համար ավելի շատ միջոցներ են գտնվում, քան թե հարկավոր է խոշոր կոլեկտիվ տնտեսությունների համար: Սակայն անհատական տնտեսությունների ունեցած միջոցները կանոնավոր չեն օգտագործվում, նրանք կազմակերպված և հաշվի առնված չեն: Մենք գիտենք, վոր անհատական տնտեսության մեջ ձին մեկ տարում միջին հաշվով մշակում է 5 հեկտար, սակայն կոլխոզում նույն ձին նույն ժամանակամիջոցում մշակում է 8 հեկտար:

Միևնույն բոլոր ձիերը և յեզները կոլխոզներում ավելի շատ են մշակում, քան անհատական տնտեսություններում, վորովհետև կոլխոզներում ամեն ինչ կանոնավոր հիմքերի վրա յե դրված: Որինակի համար, անհատական տնտեսություններում գտնվող շարքացանները համարյա կիսով չափ ել չեն օգտագործվում: Միաժամանակ նրանք ուրիշ տնտեսություններում չգտնվելու պատճառով՝ ցանքը հաճախ շաղացանով է կատարվում, վորպիսի հանգամանքը խոշոր չափով նվազեցնում է բերքատվությունը:

Մի՞թե կարելի չի թույլ տալ, վոր առաջիկա զարնանացանի կամ-
պանիային մեր ունեցած բոլոր միջոցները թիրի կերպով ոգտագոր-
ծվեն մեր գյուղատնտեսության մեջ, իհարկի վոչ, Առաջիկա զարնանա-
ցանի կամպանիայի ընթացքում մենք պարտավոր ենք հնարավորու-
թյան չափով լրիվ ոգտագործելու մեր բոլոր ուժերը և միջոցները:
Դրանով մենք կբարձրացնենք մեր գյուղատնտեսությունը և միաժա-
մանակ խոշոր չափով զարկ տված կլինենք մեր ժողովրդական տնտե-
սությանը: Շնորհիվ նրան, վոր ճիշտ հաշվառում չի կատարվում և
արտադրական միջոցները լրիվ չեն ոգտագործվում, այդ իսկ պատճա-
ռով ել նորմայից պակաս ենք ցանում, կորցնում ենք մոտավորապես
1 միլիոն հեկտար, վորի հետևանքով մեր յերկրամասում մոտ 100 մի-
լիոն փութ հաց կորչում է: Սրանից պարզվում է, վոր մեր գյուղա-
տնտեսության զարգացման և նրա սոցիալիստական վերակառուցման
միակ միջոցը հանդիսանում է մանր, անհատական տնտեսությունների
կոլեկտիվացումը՝ նրանց արտադրական միջոցների համայնացման ճա-
նապարհով: Կոլեկտիվացման հիմնական նպատակն է—կանոնավոր կեր-
պով կազմակերպել և ոգտագործել արտադրության բոլոր միջոցները և
գործիքները և մարդկային աշխատանքը դարձնել ավելի արդյունավետ:
Ահա այս գլխավոր և հիմնական խնդիրն է, վոր զարնանացանի կամ-
պանիայի կամ զարնան բոլշևիկյան ցանքի ընթացքում լուրջ
քննության պետք է առնվի և վճռականապես լուծվի հողային ընկերու-
թյունների և կոլխոզների արտադրական խորհրդակցությունների
կողմից:

Վերոհիշյալ խնդիրը ճիշտ և անսխալ կարելի չի լուծել միայն
այն դեպքում, յերբ նրանք կարողանան զարնանացանի կամպանիայի
վերաբերյալ պարզ և հաստատուն պլան մշակել: Նախորդ կամպանիա-
ների պլաններում նկատվել են խոշոր թերություններ (պլանները կազ-
մվել են անհաստատ և կիսատ): Այս տարվա զարնանացանի պլանը
պետք է կազմվի այն հաշվով, վոր ավելի մեծ չափով արտադրական
եֆեկտներ ստացվեն և նրանում մատնանշված լինեն ցանքադաշտերի
զգալի ընդարձակումը և բերքատվության բարձրացումն ու շահավետու-
թյունը:

Ինչ է հարկավոր պլանի արագ իրագործման համար. նախ՝ հաշվի
պետք է առնել հողային ընկերությունների միջոցները, սերմացուները,
գործիքները և այլն: Բավական չե՞ միայն հաշվի առնել ինվենտարը և
այլ միջոցները—անհրաժեշտ է նաև նրանց նպատակահարմար ոգտա-
գործման համար հատուկ ծրագիր մշակել: Բացի այդ՝ անհրաժեշտ է

լուրջ ուշադրություն դարձնել և գյուղատնտեսական միջոցների վրա,
ապահովելու համար հետագայի բերքը և նպաստել վերջինիս բարձրաց-
ման գործին:

Սերմացույի տեսակավորումը, զտումն ու ախտահանումը, շար-
քացանով ցանկը, հողը ժամանակին հերկելն ու ցանկը, տեսակավոր
սերմացուների ցանկն և այլն՝ լուրջ ուշադրության պետք է առնվեն:
Սովխոզները, կոլխոզները և գյուղատնտեսական պարզ հողային միու-
թյունները հատուկ կուլտուրաների համար պետք է դործադրեն ագրո-
միխիմոմի ձեռնարկներ: Այս առթիվ Համամիութենական Կենտգործ-
կոմի և Ժողկոմխորի 1929 թվի կարգադրության համաձայն՝ Յերկըր-
գործկոմի նախագահությունը 1931 թվի զարնանացանի վերաբերյալ
ըստ սեկտորային բաժանմունքի, հաստատել է հետևյալ ագրոմիխիմոմը:

Ա. ՀԱՏԻԿԱՅԻՆ ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՍԻՍԵՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Աշնանավար ցանը կատարել 100 տոկոսով, վաղ զարնանավար
հողամասերում:
2. 100 տոկոսային ցանը՝ շարքացանով:
3. Կատարել վաղ զարնանավար 100 տոկոսով, մեքենաների մի-
ջոցով:
4. Ցանքը կատարել 100 տոկոսով տեսակավոր սերմացույով:
5. Հասկավոր հատիկները ախտահարել 100 տոկոսով. ժամանա-
կին և կանոնավոր կերպով կովել մոլախոտերի և ֆլասատունների դեմ:
6. Հասկային կուլտուրաները հավաքել 100 տոկոսով տրակտորով,
կամբայով, խուրձեր կազմող և կապող մեքենաներով:

Բ. ԲՈԼՈՐ ՀԱՅՀԱՏԻԿԱՅԻՆ ՍՈՎԽՈԶՆԵՐԻ ՀԱՄԱՐ—

Վորոնք Գոսսորտֆոնդի հետ են կապված, հաստատվել, և լրացու-
ցիչ ագրոմիխիմոմ.—

1. Բոլոր դաշտերում ցանքը կատարել միայն Գոսսորտֆոնդի սեր-
մացուներով:
2. Ամբողջ ցանքը կատարել տեսակավոր սերմացուներով տեղա-
կան փորձնակայանի կողմից նշանակված ժամկետին: Ըստ հնարավո-
րության ցանքը կատարել աշնանավար հողերում՝ զարնանացան կա-
տարելու համար: Ցանել վորոշ կուլտուրաների միատեսակ սերմեր:
3. Հասկեր ունեցող կուլտուրաների սերմացուները 100 տոկոսով

ախտահանել, աղատ պահել այն հատիկները, վորոնց համար կարող ե
յերաշխարհի վերահսկիչ կայանը։

4. Մեծ ուշադրութեամբ հետևել ցանքստիտութեանը. ցորենը ցո-
րենից հետո և գարին գարուց հետո չցանել և այլն։

5. Տեսակավոր սերմացուներ, ինչպես ընդունված ե, պետք ե ցա-
նել միմիայն աշտնավար հողերում և միայն բացառիկ դեպքերում կա-
բելի յե ցանել վաղ գարնանավար հողամասերում։

6. Ցանքը կատարել անպայման շարքացանով, թե սերմացուները
և թե շարքացանի արկղը նախորդ ֆորմալինով լվանալ։

7. Գարին, վարսակը և բոլոր հասկային կուլտուրաները չպետք ե
ցանել այն հողամասերում, վորոնք անպետք արտոնելով են վարակ-
ված։

8. Արևածաղիկը պետք ե ցանել այն հողամասում, վորը ցանված
ե յեղել 5-6 տարի տուջ։

9. Տեսակավոր ցանքները կղզիացման յենթարկել ինքնաբերաբար
փոշինելով բեղմնավորվող տեղական կուլտուրաներից՝ 3 մետր տարա-
ծություն ունեցող կամ այդ չափ հնձված սահմաններով։ Իսկ արևա-
ծաղիկի համար այդ տարածությունը պիտի լինի 1000 մետր. ինչպե-
զիտենք, նրանք խաչաձև կերպով փոշինելով բեղմնավորվում են։ Յե-
զիպտացորենի համար այդ տարածությունը պահպանել 500 մետր։

10. Յուրաքանչյուր կուլտուրաների Գոսսորտֆոնդի սերմացույով
ցանք կատարել համատարած մասսիվներով։

Յերբեք չի կարելի համատարած մասսիվում թույլ տալ ուրիշ տե-
սակի բույսերի և կուլտուրաների ցանք։

11. Անպետք արոտները արմատախիլ պետք ե անել վոչ ուշ, քան
բույսերի ծլելու ժամանակամիջոցից։ Արմատախիլ անելուց հետո դաշ-
տերից անմիջապես պետք ե հեռացնել։

12. Անհրաժեշտ ե պրոպաշտի բույսերի շարքերի տարածություն-
ները նորացնել և հողը փխրացնել։ Այս աշխատանքը կատարել վեկե-
տացիոն ժամանակամիջոցում յերկու անգամից վոչ պակաս։

13. Տեսակավոր ցանքերի հավաքելն ու կախելը կատարել առա-
ջին հերթին այն հողամասերում, վորոնք պահպանել են լավ տեսակի
հատկությունները։

14. Կախելուց առաջ խիստ կերպով մաքրել բոլոր կախիչ մեքե-
նաները և քամհար մեքենաները ուրիշ ավելորդ սերմերից, մաքրել և
հակաանեխել ամբարները։

15. Անհրաժեշտ ե սերմացուների համար հատկացված շենքերի
վեներալացիաներ սարքել։

Մենք յերկար կանգ չպիտի առնենք այնպիսի սովորներին վրա,
ուր դործը լավ հիմքերի վրա յե դրված և վորտեղ աշխատանքն ե
կատարվում են գյուղատնտեսների, վարիչների և այլ մասնագետների
ղեկավարութեամբ, այլ մեր գլխավոր ուշադրությունը պիտի դարձնեն
անհատ գյուղացիներից կազմված արտադրական միությունների և հո-
ղային խմբակների վրա, վորոնք 1931 թ. գարնանացանի հաջող անց-
կացման համար հրահանգների մեծ կարիք են զգում։

Գ. ԱՅՆ ԿՈԼԽՈՉՆԵՐԸ, ՎՈՐՈՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԵՆ ՍԵՔԵՆԱ-ՏՐԱԿՑՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ՊԵՏՔ Ե ԱՌԱՋՆՈՐԴՎԵՆ ՇԵՏԵՎՅԱԼ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ

1. Անհրաժեշտ ե կատարել 100 տոկոսով վաղ գարնանավար
արակտորներին միջոցով։

2. Ցանքսը կատարել 100 տոկոսային շարքացանով։

3. 100 տոկոսով ֆորմալինով պետք ե ախտահանել ցորենը և վար-
սակը, իսկ մնացած կուլտուրաները պետք ե ախտահանել ըստ նրանց
վարակման աստիճանի և թույնի քանակի։

4. Մերմացու ցորենը 100 տոկոսով արիյերովկայի յենթարկել,
իսկ մնացած հասկավոր և հացահատիկային կուլտուրաները 100 տոկո-
սով դոման պիտի յենթարկել։

5. Աշտնավարն առաջին հերթին պետք ե ոգտագործել գարնա-
նային ցորենի և տեխնիկական կուլտուրաների համար։

6. Արևածաղիկ ցանել այնպիսի դաշտերում, վորոնք 4-5 տարի
ցանված չեն։

7. Յեզիպտացորենը պետք ե ցանել հատկապես լավ տեսակի։ Զո-
կելու ժամանակ նրանց վարի և վերի մասերը պետք ե հեռացնել և ու
շադրություն դարձնել, վոր նրանք սնկային հիվանդություններով վա-
րակված չլինեն։ Նմանապես ուշադրություն պետք ե դարձնել, վոր յե-
զիպտացորենի հատիկների ձևն ու գույնը միատեսակ լինեն։

8. Շարքացանները համապատասխան քանակով պետք ե տեղավո-
րեն սերմերը հողի մեջ, պահպանված պետք ե լինի ցանի նորման և
շարքերի տարածությունները։

9. Սերմացուն լցնելուց առաջ շարքացանի արկղը ֆորմալինով
լավ պետք ե մաքրել և լվանալ։

10. Դաշտերում ֆլասատուներին (մորեխներին, կրծողներին, մար-
գային թիթեռնիկներին և այլն) պետք ե վոչնչացնել քիմիական բա-
ղադրություններով կամ մեքենաների միջոցով։

11. Ուշադրութիւն պետք է դարձնել, վոր կուտուրաների ցանք-
սի հերթը պահպանվի՝ ռայոնի պայմանների համապատասխան: Ցանք-
սի հերթը կարելի չէ ուշացնել մոտակա տեղական փորձակայանների
ցուցումներն ի նկատի առնելով:

12. Պրոպաշնի կուտուրաների միջև յեղած հողի տաքածութիւն-
ները 100 տոկոսով պետք է փխրացնել կուտիվատորներէ միջոցով:

13. Կենդանի լծկան ուժերն ոգտագործել տափանելու, տրակտոր-
ներին սպասարկելու և այլ նպատակներով: Աշնանավար և դաբնա-
նավար հողերում շարքացանով ցան կատարելու և պրոպաշնի ու տեխ-
նիկական կուտուրաներ մշակելու համար նույնպէս կարելի չէ կենդանի
լծկաններին ոգտագործել:

14. Առաջին հերթին հարկավոր է ապահովել տնտեսութիւնները
լավ տեսակի սերմերով:

Դ. ԲՈԼՈՐ ԿՈԼԽՈՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՎՈՐՈՆՔ ՄՏԿ ՁԵՆ ՈՂՏԱԳՈՐԾՈՒՄ

1. Միայն գարնանավար կատարելու դեպքում ոգտագործել տրակ-
տորը:

2. Ցանքսը 100 տոկոսով կատարել շարքացանով:

3. 100 տոկոսով ցորենը տրեյերներով անց կացնել և մնացած հաս-
կային կուտուրաները 100 տոկոսով գտել:

4. 100 տոկոսով ախտահանել ֆորմալինով ցորենն ու վարսակը
այն ռայոններում, ուր սնկային հիվանդութիւնը վնասաբեր է: Մնացած
կուտուրաները պետք է ախտահանել ըստ նրանց վարակման աստիճա-
նի և թույնի քանակի:

5. Ապահովել տեխնիկական կուտուրաները և ցորենը աշնանավա-
րով կամ շատ վաղ գարնանավարով:

6. Բոլոր կուտուրաները պետք է տեղավորվեն ցանքսափոխու-
թյան վորոշման համեմատ:

7. Արեւածղիկները ցանել այնպիսի դաշտերում, վորոնք 4-5 տա-
րի ցանված չեն:

8. Յեղիպտացորենը ցանել հատկապէս լավ տեսակի: Նրանց ջո-
կելու ժամանակ ստորին և վերին մասերը պետք է հեռացնել և սնկա-
յին հիվանդութեամբ վարակվածներին վոչնչացնել: Ուշադրութիւն պետք
է դարձնել նաև, վոր յեղիպտացորենի հատիկների ձևն ու գույնը միա-
տեսակ լինեն:

9. Շարքացանները համապատասխան չափով պետք է տեղավորեն

սերմերը հողի մեջ, ցանի նորման և շարքերի տաքածութիւնները պահ-
պանված պետք է լինեն:

10. Շարքացանի արկղի մեջ սերմացուն լցնելուց առաջ արկղը
պետք է մի լավ մաքրել և ֆորմալինով թրջել:

11. Պրոպաշնի և տեխնիկական կուտուրաների ցանքադաշտերը
պետք է փխրացնել և շարքերը յերկու անգամից վոչ պակաս չափով
նսարացնել:

12. Գործադրել դաշտային անպետք խոտերի դեմ պայքարելու սիս-
տեմը (հնձելով, հողը փխրացնելով և այլն):

13. Վոչնչացնել ֆնասատուներին (մորեխներին, կրծողներին և թի-
թեռներին) քիմիական կամ մեքենայական միջոցներով:

14. Ուշադրութիւն պետք է դարձնել, վոր կուտուրաների ցանք-
սի հերթը պահպանվի ռայոնի պայմանների համեմատ, չուշացնելով
ցանքի հերթը, տեղական մոտակա փորձակայանների ցուցումներն ի
նկատի առնելով:

ՅԵ. ԱՁԳԱՅԻՆ ՄԱՐՁԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Սերմացուն 100 տոկոսով գտել:

2. Ցորենն ու վարսակը ֆորմալինով 100 տոկոսով ախտահանել
այն ռայոններում, ուր սնկային հիվանդութիւնները ֆնասակար աղդե-
ցութիւն ունեն: Մնացած կուտուրաները ախտահանվում են ըստ նը-
րանց վաթակման աստիճանի և թույնի քանակի:

3. Ցանքսը կատարել շարքացանով՝ բացառիկ դեպքերում ուրիշ
մեքենաներ գործադրելով:

4. Արեւածղիկը ցանել այնպիսի դաշտերում, վորոնք 4-5 տարի
ցանված չեն:

5. Ցանել հատկապէս լավ տեսակի յեղիպտացորեն: Նրանց ջոկե-
լու ժամանակ ստորին և վերին մասերը հեռացնել և սնկային հիվան-
դութեամբ վարակվածներին վոչնչացնել: Հատիկի գույնն ու ձևը միա-
տեսակ պետք է լինեն:

6. Ուժեղ պայքար մղել աղտոտ արոտների դեմ (հնձելով, հողը
փխրացնելով և այլն):

Զ. ՊԱՐՁ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀՈ- ՂԱՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Հասկային և հատիկային կուտուրաների սերմացուն 100 տո-
կոսով գտել, իսկ ցորենը 100 տոկոսով տրեյերներով անցկացնել:

2. Յորենի հատիկները 100 տոկոսով ախտահանել ֆորմալինով այն ռայոններում, ուր սնկային հիվանդությունները ֆլուսակար ազդեցություն են գործում: Մնացած կուլտուրաները ախտահանվում են ըստ նրանց վարակման աստիճանի և թռչնի քանակի:

3. 100 տոկոսային շարքացանով ցանքս:

4. Անպետք արոտների դեմ պայքարել (հնձելով, հողը փխրացնելով և այլն):

5. Ապահովել տեխնիկական կուլտուրաների բերքը աշնանավարով կամ վաղ գարնանավարով:

6. Բոլոր կուլտուրաները հավասարաչափ տեղավորված պետք է լինեն ցանքասփռության համապատասխան:

7. Արևածաղիկը ցանել այնպիսի դաշտերում, վորոնք 4-5 տարի ցանված չեն:

8. Պետք է ցանել հատկապես լավ տեսակի յեղիպտացորեն, ընտիր հատիկներ ցանել: Զոկելու ժամանակ նրանց ստորին և վերին մասերը հեռացնել, իսկ սնկային հիվանդությամբ վարակված բոլոր յեղիպտացորենները պետք է հեռացնել. նկատի պետք առնել նաև հատիկների գույնն ու ձևը:

9. Շարքացանները պետք է ամրապես և պահանջված խորությունները տեղավորեն հատիկները, պահպանելով ցանի նորման և շարքերի տարածությունները:

10. Նախ քան սերմերը լեցնելը, շարքացանի արկղը ֆորմալինով պետք է մի լավ լվանալ:

11. Դաշտերում գտնվող բոլոր ֆասսատուներին պետք է վոչնչացնել քիմիական կամ մեխանիկ միջոցներով:

12. Կուլտուրաների ցանքսի հերթը պետք է պահպանել ի նկատի առնելով ռայոնի պայմանները, պահպանելով նաև ցանի նորմալ ժամանակամիջոցները, վորոնք սահմանվում են ռայգործկոմի կողմից՝ հենվելով մոտակա փորձակայանների ցուցումների վրա:

13. Առաջ բերք ստանալու համար հատկապես նոր տեխնիկական կուլտուրաներ գործադրելով, պետք է սահմանել տեխնիկական և տեղական բոլոր հոտավետ կուլտուրաների համար հետևյալ ագրոմիտի մոմը —

14. Պետք է ցանել աշնավար հողերում, բացի Սև-ծովյան և նախալեռնային շրջաններից. նկատի պիտի առնել տեղական փորձակայանի ցուցումները, Աշնանավարի փոխարեն կարելի չե ոգտագործել վաղ գարնանավարի հողերը:

15. Աշնանավար հողը տափանել գարնանը, վորքան հնարավոր է շուտ:

16. Հողը փխրացնել փխրացնող միջոցներով, բայց հողի շերտը շուտ չտալ:

17. Պետք է ցանել ըստ կոնդիցիայի և տեսակի հատկության համաձայն:

18) Ցանքը կատարել փորձակայանների կողմից յուրաքանչյուր կուլտուրայի համար առանձին սահմանված ցուցումների հիման վրա:

19) Ցուրաքանչյուր կուլտուրայի համար պահպանել ցանքի տարածությունների նորման:

20) Ցանքերի հողերը ժամանակին փխրացնել և տարածությունները փորել, վորը շատ անհրաժեշտ է տվյալ կուլտուրայի համար:

21) Հողը ժամանակին և լավ հերկել, վորպեսզի անպետք արոտները վոչնչանան և հողը փխրուն դրություն մեջ պահվի:

22) Պետք է հետևել ֆլուսատուների յերևալուն և բույսերի հիվանդանալուն, պայքարելով նրանց դեմ համաձայն գյուղատնտեսի ցուցմով միջոցների:

23) Հասած բույսերը ժամանակին պետք է քաղել, վորպեսզի նրանք չափից ավելի հասունանալով չվոչնչանան:

24) Դեղաբույսերի և տեխնիկական կուլտուրաների համար սահմանված ընդհանուր ագրոմիտի մոմի հետ միասին անհրաժեշտ է և հատուկ ագրոմիտի մոմ սահմանել հիմնական պրոպաշնի և տեխնիկական կուլտուրաների համար:

1. ՅԵԳԻՊՏԱՅՈՐԵՆԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Յեղիպտացորենը պետք է ցանել աշնանավար կամ շատ վաղ գարնանը վարած հողերում: Աշնանավար հողերի վերին շերտերը հենց վոր չորանան, այդ դեպքում պետք է տափանել: Իսկ վաղ գարնանավարը պետք է կատարել 2—2 և կես վերջով խորություններ և իսկույն տափանել:

2. Ցանելուց առաջ, յեթե ցանքադաշտը անպետք բույսերով ծածկված է, կամ թե վերին շերտը չորացել, կոշտացել է, այդ դեպքում անհրաժեշտ է հողը հերկել կուլտիվատորով և չորս-խոփանի գուլթանով, առաջուց հեռացնելով գործիքներից հողը շուտ տվող մասերը:

3. Յեղիպտացորենը սկսում են ցանել այն ժամանակ, յերբ հողը 13—15 աստիճանի չափ (ըստ Ցելսի) տաքանում է: Պետք է ցանել

հատկապես լավ տեսակի հատիկներ, վորոնք նախապես ախտահանված պետք է լինեն:

4. Ընտրելու, ջրկելու ժամանակ հիվանդ յեզիպտացորենը բոլորովին հեռացնել. ինչպես նաև զանազան գույնի և ձևի հատիկները ցանելու համար անպետք համարել:

5. Պետք է ցանել շարքացանով, կամ ծալրայից դեպքում՝ բուգարի միջոցով: 1 հեկտար ցանելու համար վերցնել 32 կիլոգրամ հատիկներ, վորոնք կպած են հասկերի վրա. հատիկները պետք է ունենան առողջ տեսք և աճելու ընդունակ լինեն: Հյուսիսային Կովկասում ցանում են յեզիպտացորենի հետեյալ տեսակները, պահպանելով շարքերի և բույսերի միջև յեղած տարածությունները.—

ՍՏԵՐԼԻՆԳԻ համար շարքերի տարածությունը 16. վերջով, իսկ բույսերի տարածությունները 10 վերջ, ԱՅՎՈՐԻ-ՔԻՆԿԻ—16—բույսերի—3—ԼԻՄԻՆԿԻ—20—բույսերի—6—ԿԱՐՍԻ ՖԻԼԻՊԻ—20—բույսերի—6 վերջ:

6. Նախկին Դոնի, Շախտի, Սալսկի շրջանի և Նախկ. Դոնի հյուսարեկայան շրջանի համար խորհուրդ է տրվում ցանել բոլոր տեսակներից՝ ամերիկական ցելով (ոոր) պահպանելով շարքերում 24 վերջով տարածություն, շարքերում աշնանացորեն ցանելու նպատակով մինչև յեզիպտացորենի հասնելը: Հավաքելու ժամանակ զույգ շարքերի յեզիպտացորենները պետք է դարձավեն կերի կամ սիլոսի համար:

7. Հենց վոր յեզիպտացորենը յերևաց շարքերում, անհրաժեշտ է տարածությունները ձիով կամ մեքենաներով հերկել, ապա ձեռքով հերկել, փխրացնել հողը և տարածություններում գտնված փոսերը լցնել և հարթել: Յերբ այս հերկումից հետո յեզիպտացորենը կունենա 3—4 տերե, կամ 4 վերջով բարձրություն, այդ ժամանակ ավելորդ ցողունները պղկելով մի քիչ նոսրացնում են:

8. Յեզիպտացորենի ցանած ուրից մինչև նրա նոսրացնելը հարկավոր է առանձին ուղղորդություն դարձնել թռչունների վրա, վորպեսզի նրանք սերմերը չհանեն: Պետք է հետևել նաև, վոր բույսերը սնկային հիվանդություններից զերծ լինեն և այդ հիվանդությունները նկատելուն պես բույսերն այրել:

9. Յերկրորդ անգամ ձիերի միջոցով և ձեռքերով մաքրում են այն ժամանակ, յերբ բույսը հասնում են 10 վերջով բարձրության և յերբ ցանքադաշտը ծածկված է լինում մեծ քանակությամբ անպետք խոտերով:

II. ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Արեածաղիկը կարելի է մշակել ամեն տեսակի հողերում, բացի այն հողերից, վորոնք թեթև չափով ավազոտ են, խոնավ և աղային են: Արեածաղիկը պետք է ցանել աշնանավար հողերում, կամ 2 վերջով խորաթյամբ վաղ զարնանավար հողերում: Ցանելուց առաջ աշնանավար հողը զարնանը պետք է տափանել:

2. Արեածաղիկը պետք է ցանել տյիպիսի դաշտերում, վորոնք 4-5 տարի ցանված չեն:

3. Արեածաղիկ ցանը կատարել միաժամանակ հատիկա-հասկային բույսերի հետ միասին, կամ հակառակ դեպքում նրանց ցանելուց տնամիջապես հետո: Արեածաղիկը պետք է ցանել պրոպաշնի կուլտուրաների ցանքից առաջ:

4. Արեածաղիկը պետք է ցանել շարքացանով: Հյուսիսային ռայոնների համար շարքերի տարածությունը պետք է թողնել 12 վերջով, իսկ շարքերում յուրաքանչյուր բույսի տարածությունը իրարից 13 վերջով հեռավորությամբ: Հարավային ռայոնների համար շարքերի տարածությունը պետք է լինի 13 վերջով, իսկ շարքերում յուրաքանչյուր բույսի միջև պահպանել 8 վերջով տարածություն: Հատիկները պետք է ծածկել հողով 3 քառորդ—1 վերջով խորությամբ:

5. Յերբ առաջին խիսկան տերևները յերևան են դալիս, այն ժամանակ առաջին անգամ ձիերով ցանքադաշտը պետք է մշակել՝ կուլտիվատորի և պոլոնիկի միջոցով: Սրանից հետո տնամիջապես սկսել բույսերը նոսրացնել և շարքերը փխրացնել:

6. Յերկրորդ անգամ ձիով կամ ձեռքերով մշակումը պետք է կատարել այն ժամանակ, յերբ բույսը հասել է 6 վերջով բարձրության: Յերկրորդը կատարում են այն ժամանակ, յերբ գյուղատնտեսի, գյուղխորհրդի ներկայացուցչի և կոլխոզի վարչության վորոշումներով՝ հանձնաժողովը անհրաժեշտ կգտնի այդ աշխատանքը կատարելու:

III. ՍՈՑԱՅԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Բոլոր բակլային բույսերը և մասամբ սոյան կարող են բուծել ամեն տեսակի բազմադաշտյան ցանքադաշտանի հողերում: Ավելի լավ բուծում են թեթև հողերում, վորոնք զերծ են անպետք խոտերից: Ներքե աղային հողերը չեն սիրում:

2. Բակլային բույսերի համար հողը շատ լավ պետք է վարել:

Ինչպես ընդունված է՝ սոյան պետք և ցանել աշնանավար հողերում 14—18 սանտիմետր խորութեամբ, յերբ հողի վերին շերտերն սկսեալ չորանալ, տոյգ դնելու հողը պետք և տափանել: Յանելուց մի քիչ առաջ վարը հարկավոր և մշակել չորեքխոփյան գութանով, նախորդը հեռացնելով գործիքներից հողը շրջող մասերը: Այդ աշխատանքը կարելի չի կատարել նաև կուլտիվատորի կամ բոլորակաձև տափանի միջոցով և դրանից անմիջապես հետո տափանել:

3. Սոյայի ցանը պետք և կատարել այն դեպքում, յերբ հողը ըստ Յելի 12—15 աստիճան տաքացել է: Նորմալ գարնան ժամանակ սոյայի ցանքսի ժամանակամիջոցը պետք և համարել ապրիլի 15-ից—մայիսի 1-ը:

4. Սոյայի այն սերմերը, վորանք պետք և ցանվեն, առաջուց պետք է զտված և շնկված լինեն և ստուգման պետք և յնթարկվեն, թե ինչ ափով նրանք ընդունակ են աճելու: Նրանք 93 տոկոսով մաքրված պետք և լինեն, իսկ նրանց աճելու ընդունակութունը 80 տոկոսից պակաս չպետք և լինի:

5. Սոյա-բակլային ցանքերի նորման, հատիկները համար 90 տոկոս աճելու ընդունակութուն ունեցող, 1 հեկտարի համար վերցնում են 32-40 կիլոգրամ հատիկներ: Ցանքի նորման կարող և բարձրանալ խոշոր սերմերի համար, բայց 50 կիլոգրամից ավելի յերբեք չպետք և լինի:

6. Գյուղատնտեսի ցուցումով ցանելուց առաջ հողը պետք և վաճակել արմատային բակտերիաներով (ПИТРОГІН): Այս աշխատանքը կատարելու դեպքում անհրաժեշտ և, վորպեսզի պիտրոգինը և նրանով վարակված սերմերը արևի ճառագայթների ներգործման չյնթարկվեն:

7. Սոյան պետք և ցանել շարքացանով: Շարքերի տարածութունները պետք և լինեն 50—60 սանտիմետր:

8. Սոյայի հատիկները հողով պետք և ծածկել 5 և կես—7 սանտ. խորութեամբ, նկատի առնելով հողի հատկութունը, յեթե հողը ծանր է՝ պակաս խորութեամբ, իսկ յեթե թեթև է՝ ավելի խոր: Յեթե ցանելուց հետո կազմվում և կոշտ հողային շերտ, այդ դեպքում անհրաժեշտ և այն անմիջապես տափանել, փխրացնել՝ շարքերը խաչաձևող ուղղութեամբ:

9. Հենց վոր բույսը ծլում և և շարքերը նշմարվում են, այն դեպքում առաջին անգամ պետք և փխրացնել հողը: Յերկրորդ անգամ պետք և փխրացնել առաջին փխրացումից 20 օրից հետո, անպետք խոտեր յերևալու դեպքում կարելի չի և մի քիչ առաջ կատարել այդ աշխատանքը: Հետագա աշխատանքները կայանում են նրանում, վոր

ցանքադաշտը միշտ մաքուր և նրա հողը փխրուն դրութեան մեջ պահել:

10. Սոյայի և բակլային բույսերի քաղելու ժամանակ նրանց երմատները պոկելը չի թուլատրվում:

11. Քաղելուց հետո նրանց չորացնելու համար փոքրիկ դեղեր պետք և կազմել, կամ փայտե ձողերի վրա չորացնել: Չորացնելուց առաջ պետք և կալսել:

12. Պետք և կալսել սովորական կալսիչների միջոցով, իջեցնելով դեկերը և թմբուկից հանելով յերկաթյա հարվածիչները՝ փոխարինելով նրանց փայտի հարվածիչներով (ՃԻՂԻ): Կարելի չի կալսել նաև ամենահասարակ կերպով կատկաներով և ցորենի թմբիչներով:

13. Հարկավոր և մաքրել, դտել սովորական գոլիչների, քամհարի միջոցներով, միայն գործածելով համապատասխան մաղեր: Կոտրակած հատիկները պետք և անցկացնել ոձապտույտ մեքենայից:

14. Մաքրելուց հետո սերմերը պետք և պահել չոր շենքերում՝ համաձայն գյուղատնտեսի ցուցումների:

IV. ԳԵՆԱԳԵՐՉԱԿԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Վաղ գարնանը անհրաժեշտ և աշնանավար հողը տափանել:

2. Ցանելուց առաջ հողը պետք և փխրացնել զանազան տեսակի փխրացնող գործիքներով, սակայն չպետք և հողի շերտը շուռ տալ, չպետք և նաև տափանել:

3. Ցանքը պետք և կատարել ընային յեղանակով, յորաքանչյուր բույսի մեջ պահպանելով 80 սանտիմետր տարածութուն և թողնելով ամեն մի ընի մեջ յերկու հատիկ:

4. Ցանը կատարվում և գարնանը, նորմալ յեղանակներում—ապրիլի 25-ից—մայիսի 1-ը:

5. Ցանքը կատարել 1 հեկտար հողի համար վերցնելով 10 կիլոգրամ սերմ, վորի նորմալ տնտեսական արժեքը պիտի լինի 1 հեկտ. 80-95 տոկոս աճողութեամբ: Սերմերը հողի մեջ պետք և թաղել 4-7 սանտիմետր խորութեամբ:

6. Փխրացումը կատարել 2 անգամից վոչ պակաս: Առաջինը կատարել հենց վոր բույսը յերևան գա, վոչ ուշ առաջին մշտական տերևների յերևալուց, իսկ յերկրորդը կատարել գյուղատնտեսի ցուցումով, հենց վոր տնայտեք արոտներ դուրս գան: Յերկրորդ անգամ փխրացնելու ժամանակ հողը պետք և մի լավ մանրացնել:

7. Շարքերի տարածութիւններում, յերբ վերին շերտը կոշտանում է, այդ դեպքում հարկավոր է այն մանրացնել և փխրացնել:
8. Սերմերը հավաքել, չթողնելով նրանց բոլորովին հասնելու, գույն ստանալու, վորպեսզի գետին չթափվեն:
9. Գինագերջակի վողկույդները քաղելու ժամանակ դանակով պետք է կտրել, բայց յերբեք չպետք է կոտրատել:
10. Սերմեր մաքրելու դործը հեշտացնելու նպատակով հմտությամբ պետք է կալսել, չթողնելով, վոր սերմերի վրա փոսեր, ճեղքվածքներ առաջանան:
11. Կալը այնպես պատրաստել, վոր անձրևները նրան չթրջեն:
12. Զանազան ժամանակներում քաղված գինագերջակը պետք է կալսել և դիզել բոլորովին առանձին:

V. ԿԵՆՍՓԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. 15—18 սանտ. խորությամբ աշնանը վարած հողամասը պետք է տափանել վաղ գարնանը:
2. Ցանից առաջ հողը պետք է փխրացնել զանազան տեսակի փխրացնող գործիքներով, սակայն հողի շերտը շուտ չտալ:
3. 1 հեկտար ցանելու նորման 11 և կես կիլոգրամ է, վերցնել այնպիսի սերմացուներ, վորոնք գյուղատնտեսական արժեք են ներկայացնում:
4. Ցանքը կատարել ապրիլի 25-ից մինչև մայիսի 10-ը:
5. Շարքերի տարածութիւնները պահպանել 50-56 սանտ.:
6. Վոչ պակաս քան յերկու անգամ պետք է փխրացնել և նոսրացնել շարքերը, պահպանելով յուրաքանչյուր բույսի միջև 5-6 սանտ. տարածութիւն: Առաջին անգամ պետք է փխրացնել այն ժամանակ, յերբ բույսը 8-10 սանտիմետր բարձրությամբ աճել է:
7. Ցողունները պետք է կտրել, յերբ ստորին սերմերի 2-3 արկղիկներն սկսել են դեղնել: Պետք է կտրել գետնից 16 սանտիմետրից վոչ պակաս բարձրության վրա: Քաղելու հետ միաժամանակ պետք է նաև տեսակների բաժանել, խուրձեր կապել և դարսել:

ԲԱՄԲԱԿԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ


1. Բամբակը պետք է ցանել աշնանավար կամ վաղ գարնան վա-

րած հողամասերում և հետագայում գարնանավարի հողը պետք է տափանել:

2. Վաղ գարնանը աշնանավար հողամասը տափանել:
3. Բամբակը ցանել գարնանային նորմալ պայմաններում—ապրիլի 25-ից մինչև մայիսի 10-ը, նկատի առնելով գյուղատնտեսի ցուցումները:
4. Ցանի կանոնները պահպանել, 1 հեկտար ցանելու համար միջին հաշվով պետք է վերցնել 48 կիլոգրամ սերմ:
5. Ցանելուց 2 որ առաջ սերմերը պետք է թրջել, նայած յեղանակներին և նորից առաջնորդվել գյուղատնտեսի ցուցումներով:
6. Ցանել բամբակի շարքացանով, խիստ կերպով պահպանելով շարքերը և թողնելով շարքերի միջև 60 սանտ. տարածութիւն:
7. Հողի կոշտանալու դեպքում շարքերը խաչաձևող ուղղությամբ տափանել:
8. Առաջին անգամ ձեռքերով պետք է փխրացնել և նոսրացնել 10 սանտ. հեռավորությամբ այն ժամանակ, յերբ յերկրորդ իսկական տերևները յերևան են յեկել:
9. Յերկրորդ անգամ վերջնականապես պետք է փխրացնել և նոսրացնել 20 սանտ. տարածությամբ, յերբ շարքերում բույսը կռնենա 18 սանտ. բարձրութիւն:
10. Վոչ պակաս, քան յերեք անգամ ձիու կուտիվատորով մշակում կատարել շարքերի տարածութիւններում:
11. Հարկավոր է պայքարել ֆլասատուների և բույսի հիվանդութիւնների դեմ և հնձելու միջոցով սահմանները աղտոտ արոտներից մաքրել:
12. Հասած բամբակի բոլորովին բացված կնքուղիները ժամանակին պետք է հավաքել և թուլ չտալ, վոր գետին թափվի:
13. Բամբակը պահպանել և հանձնել առանձին-առանձին, ըստ տեսակների:
14. Բամբակը պետք է հանձնել չոր և մաքուր վիճակով:
15. Ցրտի պատճառով չբացված կնքուղիները հավաքել մասնագիտ գյուղատնտեսի ցուցմունքով:

ԴԻՍԱԼՈՍԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

1. Զերմացոցը պետք է ցանել ապրիլի 15-ից մաքուր տեսակի սերմերով, պահպանելով ցանքի տարածութիւնը 100 կիլոգրամ սերմ):
2. Բացի տաք ջրամուղներում ցանելուց, վորը կատարվում է ապ-



րոպերսոնալի ցուցումներով, ջերմանոցներում պետք է ցանկ մարտի փոքրներին և ապրիլի 20-ից վոչ ուշ:

3. Վնասատուների դեմ պայքարելու համար լավ է հանքային պարտացում կատարել, բացի այդ՝ ծիւրերի հիվանդութիւնները պետք է բժշկել ագրոպերսոնալի ցուցումներով:

4. Ծխախոտը պետք է տնկել աշնանավար հողամասերում կամ վաղ գարնանավար հողամասերում, վորոնք հետագայում պետք է աւաւան վնս:

5. Աշնանավար հողը վաղ գարնանը մի լավ տափանել:

6. Ցանկուց առաջ առանց շուռ տալու հողը փխրացնող գործիքներով մշակել, վորի ժամանակ թույլ է տրվում նաև տափանել:

7. Պետք է տնկել հասած տունկեր, վորոնց ցողունները, մինչև վերին բողբոջները, ունեն 5-7 սանտ. կամ 5 տերկներ, չհաշված սերմի տերկները:

8. Տունկերի տարածութիւնները շարքերում և շարքերի տարածութիւններում կախում ունեն տեսակներից, հողի բնույթից և պլանացիայի տեղից: Այս բոլորը կախված է ագրոպերսոնալի ցուցումներից: (Պոշոր տերկներ ունեցողների համար շարքերում տարածութիւնները 18—36 սանտիմետր, իսկ տարածութիւնների արանքներում 53—71 սանտիմետր մանր տերկներ ունեցողների համար շարքերում 18—27 սանտիմետր, իսկ տարածութիւնների արանքներում 53—62 սանտիմետր):

9. Գյուղատնտեսի ցուցումներով ուժասպառ և վաղուցվա վարված հողերը պետք է պարարտացնել սուպերֆոսֆատով և ծծմբաթթվուտան ամոնիակով: Այս աշխատանքը պետք է կատարել ծխախոտ տնկելուց 7 ուր առաջ:

10. Մայիսի առաջին կեսերից սկսած մինչև հունիսի 20-ը, ծխախոտի տունկերը ջերմանոցներից դաշտ պետք է տեղափոխել տնկելու համար:

ՇԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

1. Տնկելուց յերկու շաբաթ հետո առաջին անգամ պետք է տնպետք խոտերը մաքրել և հողը փխրացնել:

2. Տնկելուց չորս շաբաթ հետո նույն աշխատանքը կատարել յերկրորդ անգամ և ցողունների շուրջը հող դիզել: Իսկ ինչ վերաբերում է յերրորդ անգամվան, վերոհիշյալ աշխատանքը պետք է կատարել հա-

տուկ հաճախութեամբ, վորը կազմված է գյուղատնտեսից, գյուղխորհրդի ներկայացուցից և կոլեկտիվ արհմիութիւնից:

3. Ծխախոտի վերին մասերի և կողքերի ճյուղերը պետք է ժամանակին հեռացնել:

4. Հաստատուն տերկները անմիջապես պետք է քաղել, հավաքել և չորացնել մինչև հոկտեմբերի 1-ը, իսկ մնացած բոլոր մասերը հավաքել մինչև հոկտեմբերի 15-ը:

Վերոհիշյալ բոլոր աշխատանքները լրիվ և կանոնավորապես կատարելով, առաջիկա գարնան բոլշեկյան յերկրորդ ցանքսով, գյուղատնտեսութիւնը կհասնի իր նպատակին, իր կատարած աշխատանքներից ուտանալով հսկայական ոգուտ:



րողերսոնալի ցուցումներով, ջերմանոցներում պետք է ցածնել մարտի սկզբներին և ապրիլի 20-ից վոչ ուշ:

3. Վնասատուների դեմ պայքարելու համար լավ է հանքային պարարտացում կառարել, բացի այդ՝ ծիւրի հիվանդութիւնները պետք է բժշկել ագրոպերսոնալի ցուցումներով:

4. Ծխախոտը պետք է տնկել աշնանավար հողամասերում կամ վաղ գարնավար հողամասերում, վորոնք հետագայում պետք է տափան վնն:

5. Աշնանավար հողը վաղ գարնանը մի լավ տափանել:

6. Շանկուց առաջ առանց շուռ տալու հողը փխրացնող գործիքներով մշակել, վորի ժամանակ թույլ է տրվում նաև տափանել:

7. Պետք է տնկել հասած տունկեր, վորոնց ցողունները, մինչև վերին բողբջները, ունեն 5-7 սանտ. կամ 5 տերևներ, չհաշված սերմի տերևները:

8. Տունկերի տարածութիւնները շարքերում և շարքերի տարածութիւններում կախում ունեն տեսակներից, հողի բնույթից և պլան-տացիայի տեղից: Այս բոլորը կախված է ագրոպերսոնալի ցուցումներից: (Յոշոր տերևներ ունեցողների համար շարքերում տարածութիւնները 18—36 սանտիմետր, իսկ տարածութիւնների արանքներում 53—71 սանտիմետր մանր տերևներ ունեցողների համար շարքերում 18—27 սանտիմետր, իսկ տարածութիւնների արանքներում 53—62 սանտիմետր):

9. Գյուղատնտեսի ցուցումներով ուժասպառ և վաղուցվա վարված հողերը պետք է պարարտացնել սուպերֆոսֆատով և ծծմբաթթվաւա-րն ամոնիալով: Այս աշխատանքը պետք է կատարել ծխախոտ տնկե-լուց 7 որ առաջ:

10. Մայիսի առաջին կեսերից սկսած մինչև հունիսի 20-ը, ծխա-խոտի տունկերը ջերմանոցներից դաշտ պետք է տեղափոխել տնկելու համար:

ԾԽԱԽՈՏԻ ԴԱՇՏԱՅԻՆ ԽՆԱՄՔԸ

1. Տնկելուց յերկու շաբաթ հետո առաջին անգամ պետք է տն-պետք խոտերը մաքրել և հողը փխրացնել:

2. Տնկելուց չորս շաբաթ հետո նույն աշխատանքը կատարել յեր-կրորդ անգամ և ցողունների շուրջը հող գիգել: Իսկ ինչ վերաբերում է յերրորդ անգամվան, վերոհիշյալ աշխատանքը պետք է կատարել հա-

տուկ հանձնաժողովի վորոյմամբ, վորը կազմված է գյուղատնտեսից, գյուղխորհրդի ներկայացուցչից և կոլտոզի վարչութիւնից:

3. Ծխախոտի վերին մասերի և կողքերի հլուղերը պետք է ժա-մանակին հեռացնել:

4. Հաստատուն տերևները անմիջապես պետք է քաղել, հավաքել և չորացնել մինչև հոկտեմբերի 1-ը, իսկ մնացած բոլոր մասերը հավա-քել մինչև հոկտեմբերի 15-ը:

Վերոհիշյալ բոլոր աշխատանքները լրիվ և կանոնավորապես կա-տարելով, առաջիկա գարնան բողբջիկյան յերկրորդ ցանքսով, գյուղա-տնտեսութիւնը կհասնի իր նպատակին, իր կատարած աշխատանքնե-րից օտանալով հսկայական ոգոււտ:



ՄԱՄԱՌԻԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՀՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետարիոններից՝ Աշոտ Լուսինցի բանաստեղծությունները:
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարիոնների աստղիացիայի անդամների գրվածքները
3. Ինչպես կազմակերպել խոշոր կոլեկտի տնտեսութ. և նրա վարչությունը—3-րդ պր.:
4. 16-րդ կուսհամագումարի արդյունքները:
5. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.—արդյունաբերություն:
6. Խոզաբուծության կազմակերպումը կոլեկտում:
7. Կերի հարցը և սխեմացումը:
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները:
9. Ձեռնարկ ծխախոտագործության համար:
10. Շագաբուծություն:
11. Թռչնաբուծություն:
12. Աշխատանքի կազմակերպումը յեվ յեկամաների բաժանումը կոլեկտում: Լավագույն կոլեկտիվների փորձը Հյուս. Կովկասում:
13. Տրանսպորտը և կալիչը. տեխնիկական ձեռնարկ:
14. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները:
15. Կատիլով.—Բուլղերիյան յերկրորդ զարնան մարտական խնդիրները:
Պիմել՝ Ростов н-Д., Буденовский пр., 60, Крайнациздат,

ՀՀ Ազգային գրադարան



NL0079020

ԳԻՆՆ Ե 5 ԿՈՊ.

[18252